Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 29-06-2020 թ. որոշմամբ
««ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԵԼԻՔ-ԱԴՄՅԱՆ ՓՈՂ. 2/2
1.3 Պետական գրանցման համարը		222.160.907037
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2016-04-21
1.5 ՀՎՀՀ-ն		02648145
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)60700800
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		A.sahakyan@idea.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արմեն Մինասյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Աջակցել ու նպաստել բարեգործությունը խթանող ենթակառույցների զարգացմանը ՀՀ-ում	1835834500
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		

9.1 Դրամական միջոցներ	1835834500	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Աջակցել ու նպաստել բարեգործությունը խթանող ենթակառույցների զարգացմանը ՀՀ-ում	1804849113	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1804849113	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	1804849113	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 2 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ Digitally signed by SAHAKYAN ARMINE
ստորագրությունը, անունը, ազգանունը

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Աջակցություն զարգացման նախաձեռնություններին» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Եզրակացություն

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունները և կից ծանոթագրությունը, քաղված են «Աջակցություն զարգացման նախաձեռնություններին» բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) և նրա դուստր ընկերության (միասին՝«Խումբ») 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտորական ստուգում անցած համախմբված ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով, կից ներկայացված ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտորական ստուգում անցած համախմբված ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով, հետևաբար ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Խմբի՝ աուդիտորական ստուգում անցած համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Աուդիտորական ստուգում անցած համախմբված ֆինանսական հաշվետվություններ և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2020թ. հունիսի 29-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք վերապահումով աուդիտորական կարծիք:

Վերապահումով կարծիքի հիմքերը հետևյալն են.

Խմբի ներդրումը «Նորթերն Լայթ Ինվեսթմենթ» ընկերությունում, որն արտասահմանյան ասոցիացված կազմակերպություն է և հաշվառվում է իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում կազմել էր 15,657,536 հազ. ՀՀ դրամ, և տվյալ ներդրումից իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող զուտ օգուտը Խմբի տարվա ֆինանսական արդյունքներում կազմել էր 1,850,760 հազ. ՀՀ դրամ:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Որոշ ենթադրություններ, որոնք օգտագործվել էին Խմբի կողմից 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տվյալ ասոցիացված կազմակերպությունում ներդրման իրական արժեքի գնահատման համար, արդարացված չեն: ՖՀՄՍ-ից այս շեղման հետևանքները ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հաշվեկշռային արժեքի և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ասոցիացված կազմակերպությունների արդյունքի նկատմամբ չեն որոշվել:

Մենք 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխանորեն արտահայտել ենք վերապահումով աուդիտորական կարծիք:

Խմբի կողմից 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տվյալ ասոցիացված կազմակերպությունում ներդրման իրական արժեքի գնահատման համար օգտագործված ենթադրությունները արդարացված են, սակայն Խումբը չի ճշգրտել համապատասխան տվյալները 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս շեղման հետևանքները 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ասոցիացված կազմակերպությունների արդյունքի նկատմամբ ևս չեն որոշվել:

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել եզրակացություն ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ աուդիտի միջազգային ստանդարտ 810 *«Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ»* (վերանայված) ստանդարտին համապատասխան:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝ Էրիկ Հայրապետյան

29 հունիսի, 2020թ.

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 29.06.2020 11:29